

Н 11 14883

Библиотека
6 МАЯ 05
и
М. С. С. С. С.

Международный
книгообмен

ԿՐԹԱԿԱՆ ԵՐԱԳԻՐ

ԱԶԳ. ԵՐԿՍ. ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

ՌՌԲՍԺՌԲԳ



1904

редакция: Н. Н. Магидиш — Русс

Составил Г. Г. Уаզմանեան



НБИБ
КВИГООБМЕН
ОТЧИСЛЕНА

1905

1909
9/1st




A II 61741

КНИГООБМЕН


ОТЧИСЛЕНА

Յ Ա Ռ Ա Չ Ա Ր Ա Ն



Ռուսուդի Ազգ. Երկսեռ Մարտարաններու Ուսուցչական Մարմինը Պատ. Հոգաբարձութեան հետ համախորհուրդ յօրինեց առաջիկայ ծրագիրը որպէսզի այսուհետեւ կարելի ըլլայ աւելի կանոնաւոր եւ աւելի ժամանակաշարմար դաստիարակութեամբ օժտել երկսեռ մանուկները: Առանց ո՛րէէ անիմաստ յաւակնոտութեան՝ Ուսուցչական Մարմինս կը յուսայ թէ իր ծրագիրը,—զոր Ֆրանսական եւ պուլկարական նախակրթարաններու ծրագրին, ինչպէս նաև Կ. Պոլսոյ Ուսումնական Խորհրդոյ ծրագրին համաձայն պատրաստած է,—եթէ ի նկատի առնուի արդոյ հայ ուսուցիչներէն՝ պիտի կրնայ օգտակար ըլլալ նաև Պուլկարիոյ միւս ազգային վարժարաններու համար:

Մենք ալ՝ Քոնստանդուպէի պէս՝ համոզուած ենք թէ՛ «Գաստիարակութեան նպատակն է իւրաքանչիւր սերունդի ֆիզիքական, մտաւորական և բարոյական կարողութիւնները մշակել և այսպէսով մարդկային ազգին ընդհանուր և աստիճանաւոր կատարելութեան նպաստել, գերագոյն նպատակ՝ որու պարտի ձգտիլ ամէն ընկերային կազմակերպութիւնս» Այս ցանկալի նպատակին ըստ կարելւոյն հասնելու համար, արդի մանկավարժութեան պահանջներուն համեմատ, նախակրթարաններու մէջ ուսուցումը



(enseignement) երեք դասընթացքի բաժնեցիներ. Տարրական դասընթացք, Միջին դասընթացք և Բարձրագոյն դասընթացք: Ըստ որում, այսուհետեւ, Ռուսճուգի երկսեռ վարժարանները—չէնքի անյարմարութեան և պիւտճէի անձկութեան հետեւանօք—առ առաւելն հինգ կարգ պիտի ունենան, հետեւաբար Ա. և Բ. կարգերը պիտի կազմեն Տարրական դասընթացք, Գ. և Դ. կարգերը՝ Միջին դասընթացք, Իսկ Ե. կարգը՝ Բարձրագոյն դասընթացք: Եթէ մանկապարտէզէն եկող մանուկը հինգ տարի կանոնաւորապէս հետեւի մեր վարժարաններու դասընթացքներուն, պիտի կրնայ, առանց ո՛ր եւ է դժուարութեան բաղխելու, ամենայն յաջողութեամբ մտնել պետական գիմնազիոններուն Գ. դասարանը:

Փիղիքական դաստիարակութիւնը աւագ կարեւորութիւն ունենալով՝ Հոգաբարձութիւնը ամէն ջանք ի գործ պիտի դնէ, որպէսզի յառաջիկայ տարեշրջանէն սկսեալ մարմնամարզի և ձեռագործի (travaux manuels) դասերը անպատճառ աւանդուին:

Նկատելով որ կարելի չէ՝ մէկ տարուան մէջ՝ գրաբար սորվեցընել, ստիպուեցանք մեր ծրագրերէն դուրս հանել այն, սակայն, ի փոխարէն, լայն տեղ մը տուինք ոճի և շարագրութեան դասերուն, որոնք, աւելորդէ ըսել, շատ օգտակար են:

Ուսուցչական Մարմինս թէև բոլորովին հակամանկավարժական կը գտնէ նախակրթարանի մէջ մայրենի լեզուէ դատ ուրիշ լեզուի աւանդումը, (որուն պատճառով տղաք օրական

չորս ժամէն աւելի դաս կ'ունենան) բայց աչքի առջեւ ունենալով կեանքի անողոք պահանջները՝ ստիպուեցաւ պուլկարերէնի հետ գերմաներէն ևս մտցնել ծրագրին մէջ: Ռուսճուգցի հայ մանուկը—ինչպէս ամէն աստղի տակ տարտղնած բոլոր հայ մանուկներ— հարկագրուած է մէկէ աւելի օտար լեզուներ սորվիլ՝ կեանքի կռիւին մէջ աննկուն հանդիսանալու համար: Այսուհետեւ, ֆրանսերէնը՝ որ ցարգ կաւանդուէր, և որուն պէտքը այնքան զգալի չէ, պիտի տեղի տայ գերմաներէնին, հետեւաբար՝ պիտի աւանդուի միայն այն աշակերտներուն որոնք արդէն մէկ երկու տարիէ ի վեր սկսած են սորվիլ:

Երեք դասընթացքներու համար ալ զետեղեցինք կատարեալ բարոյական գիտելիքներ՝ կապուած ֆրիստոնէական կրօնի և եկեղեցական պատմութեան հետ որոնք, իբր լրացուցիչ մաս, պիտի շարկապուին անոնց:

Ուսուցչական Մարմինս՝ առաջիկայ ծրագիրը պատրաստելով՝ կը սիրէ յուսալ թէ երկունսպատակի ծառայած պիտի ըլլայ, նախ՝ Ռուսճուգի ազգային նախակրթարանները աւելի բարւոք միճակի մէջ գնել, երկրորդ՝ Պուլկարիոյ միւս հայ վարժարաններուն ալ՝ անուղղակի օգտակար ըլլալ, մինչեւ որ պատրաստուի միօրինակ լաւագոյն ծրագիր մը Պուլկարիոյ բոլոր հայ կրթարաններուն համար:

21 Յունիս 1904

Ուսուցչական մարմին

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԺՕՄԵՐ

		Ա. կարգ	Բ. կարգ	Գ. կարգ	Դ. կարգ	Ե. կարգ
1.	Հայերէն լեզու	6	5	5	5	5
2.	Պուլկարերէն «	-	4	4	4	4
3.	Գերմաներէն «	-	-	3	3	3
4.	Ֆրանսերէն «	-	-	-	3	3
5.	Կրօնք բարոյագիտութիւն	1	1	1	1	1
6.	Իրագիտութիւն	2	2	2	2	2
7.	Պատմութիւն	2	2	2	2	3
8.	Աշխարհագրութիւն	2	2	2	2	2
9.	Թուաք. - երկրաչափ.	4	4	4	4	4
10.	Գիր	4	4	2	1	1
11.	Գծագրութիւն	2	2	2	2	2
12.	Երաժշտութիւն	2	2	2	2	2
13.	Մարմնամարզ	2	2	2	2	2
14.	Ձեռական աշխատութիւն	3	3	3	3	3
		—	—	—	—	—
		30	33	34	36	37

* Ֆրանսերէն լեզուի մասին տե՛ս յառաջաբանը:

Մ Ա Ն Կ Ա Պ Ա Ր Տ Է Ձ

(5 և 6 7 տարեկան)

1. Առողջապահութեան եւ մաքրութեան խնամք

Առաւօտուն եւ կէսօրէն յետոյ վերադարձին՝ տղոց առողջական վիճակը եւ մարմնոյն մաքրութիւնը քննել. Տղոց խաղելու հսկել առողջապահական տեսակէտով. — ամէնէն տկարներուն մասնաւոր խնամք տածել:

2. Մարմնախարզ

Շրջանապարեր (բօնա), զօրաչու (մարշ), կշռաւոր շարժումներ, միմախաղեր՝ երգերու ընկերակցութեամբ. — Սչաղաքն խաղեր (չուան, գնտակ, չրջանակ, ևւն). — Նախնական կարգապահիկ մարզանքներ (կարգեր կազմել, չուել, խղուիլ եւ հաւաքուիլ):

3. Զեռուգործական վարչակնիք

Մանչերու համար

Հիւսելու, ծալլելու, ոստայնանկելու նախնական վարժութիւններ. — խաւաքարաի կտրատում. երկրաչափական հաստատուններու ձեւով խաւաքարաներ կարել եւ փալցնել. — Կողովադործութիւն: — Քանըվայի կամ թղթի վրայ դունաւոր բուրդէ սրբող աշխատութիւններ:

Աղջկանց հաւես

Ծալլելու, հիւսելու, սստայնանկելու նախնական վարժութիւններ: Տրուած շափերով թղթեր կարատել եւ ծալլել: Գանրվայի վրայ ուսում կարի տարրերուն: — Գրօշէ:

4. Մայրենի լեզու եւ Գիր

Ընթերցման առաջին վարժութիւններ: — Գիրեր, վանկեր, բառեր:

Գիրի առաջին սարրեր

Սօսելու, կարդալու եւ դրելու զուգորդեալ վարժութիւններ՝ ուղղագրութեան վարժեցնելու համար տղաքը:

Ընտանեկան ամենապարզ հարցումներ, որպէսով տղան կարենայ իր միտքը յատակօրէն արտայայտել եւ առողանութեան թերութիւնները ուղղել:

Շատ կարճ բանաստեղծութիւններ արտասանել: Նախ՝ մէկ բառ, յետոյ՝ երկու կամ երեք բառ, ապա՝ շատ կարճ նախադասութիւններ թելադրել:

Դաստիարակուհիին կողմէ կարճ ընթերցումներ, որոնց պիտի ունկնդրեն տղաքը եւ յետոյ պիտի պատմեն:

5. Պատմութիւն

Ազգային պատմութենէն մանրավէպեր, դրոյցներ, կենսագրութիւններ, ճամբորդութեան պատմութիւններ: Այս նիւթերուն յարմար պատկերները բացատրել:

6. Աշխարհագրութիւն

Ծնողաց տան թաղին եւ փողոցին անունը: — Գաղափար հեռաւորութեան եւ տեղերու, յարաբերական գիրքերու (գալրոցին եւ տան ու անոնց մասերուն՝ բաղդատութեան միջոցաւ): Ճամաք եւ ջուր. — Արև (Արեւելք եւ Արեւմուտք):

Ընտանեկան խօսակցութիւններ ևւ նախնական փոքր վարժութիւններ՝ դիտել տալու համար տղոց իրենց փորձառութեան շրջանակին մէջ՝ երկրին մակերեւոյթին այլազան կերպարանքները (լեւ, ձոր, ծով, գետ, կղզի ևւն.)

7. Թուարաւնորթն

Ընտանեցնել մանուկները առաջին թիւերու անուններուն. առարկաներու միջոցաւ վարժեցնել զանոնք համբերութեամբ մինչև 10. — Մտաւոր հաշիւ առաջին 10 թիւերուն վրայ:

Ուսում առաջին թիւերու կոտորակներուն (կէսին, քսոտողին, մէկ երրորդին) բերանացի ևւ դրաւոր: — Չորս գործողութեանց դրաւոր ևւ մտաւոր փոքրիկ վարժութիւններ՝ թանձրացեալ թիւերու վրայ: Մեթր, ֆրանք, լիար:

8. Իրագիտութիւն

Մարդկային մարմնոյն վրայ շատ տարրական ծանօթութիւններ. առողջապահութիւն (փոքրիկ խրատներ.) բաղդատական մանր ուսումնասիրութիւն տղոց ծանօթ կենդանիներուն, աունկերուն, քարերուն ևւ մետաղներուն. — Գանի մը սննդական ևւ ճարտարական բոյսեր, քարեր ևւ մետաղներ:

Օդ ևւ ջուր (չոզի, ամպ, անձրև, ձիւն, սառ): Սյ: փոքրիկ իրադիտական դասերը աւանդել պէտք է՝ միշտ առարկաները տղոց աչքին առջև ևւ ձեռքերուն մէջ դնելով:

Ընտանեկան խօսակցութիւններով ևւ վարժութիւններով տղոց սորվեցնել աջը ևւ ձախը, օրերուն ևւ ամիսներուն անունները, կենդանիներուն, բոյսերուն ևւ հանքերուն տարբերութիւնը, տարուան եղանակները. պէտք է՝ փոյթ տանիլ մանաւանդ ուրպէսզի տղան նայելու, դիտելու, բաղդատելու, հարցասիրելու ևւ միտք պահելու վարժուի:

Պէտք է ջանալ իրադիտական դաս, դժագրութիւն, բարոյական դիտելիք, խաղ ևւ երգ իրար խառնել, որ-

պէսզի տպաւորութեանց միութիւնը աւելի տեւական հետք մը թողու տղոց մտքին եւ սրտին մէջ: — Ասկից դատ, որքան կարելի է՝ աշխատելու է իրադիտական դասերը տարւոյն եղանակներուն յարմարցնել, որպէսզի անոնց նիւթը նոյն իսկ բնութենէն առնելով՝ աղաքը զիտելու, բաղդատելու եւ դատելու ունակութիւն ստանան:

9. Գծագրութիւն

Քարետախտակի եւ թղթի վրայ դիժեր եւ անոնց զուգորդութիւնները: — Քառանկիւնադիժ թղթի վրայ դժական փոքր ձևերու դիւտեր ընել: — Վարժուհիին՝ սեւ տախտակին վրայ շինած պարզ դժագրութեանց ընդօրինակութիւն: — Սմեռասպարզ առարկաներու նմանողութիւններ:

10. Երգ

Փոքրիկ երգեր:

Միասին կամ երկու մասի բաժնուած երգել: Միմիայն ունկնդրութեամբ սորվեցնել երգերը:

11. Բարոյագիտութիւն

Շատ պարզ խօսակցութիւններ, զորս պէտք է խառնել դասի եւ դրօսանքի բոլոր վարժութեանց: Փոքրիկ բանաստեղծութիւններ բացատրել եւ դոց սորվեցնել: — Բարոյական պատմութիւններ բերանացի պատմել եւ անոնց իմաստին եւ նշանակութեան վրայ հարցումներ ընել:

Վարժուհին մասնաւոր խնամք պէտք է տածէ այն տղոց՝ որոնց վրայ թերութեան կամ մոլութեան մը սկզբնաւորութիւնը կը նշմարուի:



ՏԱՐՐԱԿԱՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ

Ա. Մ Ա Ս

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՔՐՈՒԹԵԱՆ ԽՆԱՄԲ

Տարրական դասընթացի Ա. և Բ. սարի

Առաւօտուն և Կէսօրէն յետոյ վերադարձին՝ տղոց առողջական վիճակը և և մաքրութիւնը քննել.— Բացարձակ մաքրութիւն սպհանջել.— Խաղերու ատեն հսկել— Կործնական խրատներ տալ թէ՛ ընդհանուրին և թէ՛ առանձին՝ սնունդի, հագուստի, նիստուկացի և այլնի մասին.— Մասնաւոր հոգածութիւն ցոյց աալ տկարներուն համար:

Միջին դասընթացի Ա. և Բ. սարի

Կրթութեան և դաստիարակութեան միեւնոյն միջոցներուն շարունակութիւնը:

Բարձրագոյն դասընթացի Ա. սարի

Կրթութեան և դաստիարակութեան միեւնոյն միջոցներուն շարունակութիւնը:

ՄԱՐՄՆԱՄԱՐՁ

Տարրական դասընթացի Ա. և Բ. սարի

Շրջանափոխութիւններ. — Նախնական կշռաւոր շարժումներ. — Սյլաղան խաղեր (չուան, դնդակ, շրջանակ, և այլն) և վազքի խաղեր. — Գարձեր և շրջաններ:

Միջին դասընթացի Ա. եւ Բ. սարի

Նախորդ վարժութիւններուն վրայ աւելցնել սան-
դուղի փորձեր, կապ-կապ շուան, օղակներ, հաստատուն
ձող, զուգահեռական ձողեր, կապուած ձող եւ արապէզ:

Բարձրագոյն դասընթացի Ա. սարի

Նախորդ վարժութիւններն ու փորձերը. — Հորիզո-
նական գերան. — Մէկ ոտքի վրայ հսւասարակշիւութեան
վարժութիւններ. — Բազուկներու շարժումներ, քայլըն-
թացի հետ զուգորդուած. — Նուպով վարժութիւններ
երկերկու տղայ. — Կազք եւ ոստում:

Յ. ՁԵՌՍԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

(Մանչերու համար)

Տարրակաւն դասընթացի Ա. սարի

Ձեռքերու յաջողակութիւնը զարգացնելու ծառայող
ձեռական վարժութիւններ. — Սաւաքարտի կտրատում. —
Երկրաչափական հաստատուններու ձեւով խաւաքարտեր
կտրել եւ փակցնել:

Բ. սարի

Կողովագործութիւն. — Ձանազան գոյներով շիւղեր
կցել. — Կաւապատիկեր, երկրաչափական հաստատուննե-
րու եւ շատ պարզ առարկաներու նմանութիւններ:

Միջին դասընթացի Ա. սարի

Սաւաքարտեայ առարկաներ շինել եւ դրուադել
գունաւոր թղթով եւ ներկուած դժադրութիւններով:

Երկաթէ թելով փոքրիկ ցանցակերպ գործուածներ

Բ. սարի

Երկաթի թելէ եւ փայտէ խառն գործուածք. վան-
դակներ. — Կաւապատիկեր. — Ճարտարապետական սլարլ
դարդեր. — Շատ գործածական գործիքներու վրայ ծա-
նօթութիւններ:

Բարձրագոյն դասընթացի Ա. սարի

Գծագրութեան եւ կաւապահերի զուգորդեալ վարժութիւններ. — Փայտի վրայ աշխատութեանց մէջ գործածուած գլխաւոր գործիքներու ուսումը. — Փայտողորկել, սղոցել, կցել. — Գամուլ կամ առանց դամի միացուած տուփեր. — Փայտէ ճախարակ, խիստ պարզ առարկաներու բոլորչիացում:

Երկաթագործութեան մէջ գործածուած գլխաւոր գործիքներուն ուսումնական վարժութիւններ խարտոցի եզերահարթումի, դարբնեալ եւ ձուլածոյ անհարթ առարկաներ:

(Աղջկանց համար)

Տարրական դասընթացի Ա. սարի

Գուլպայակերպ հիւսք (երիզ) . — կեռասեղի գործածութիւն (քոշէ) . — Գործածութիւն քանրվայի եւ անոր ասեղին:

Բ. սարի

Գուլպայակերպ հիւսք. — Թեղանիք, երախայի գուլպաներ. — Վարժութիւն քանրվայի. — Տառ եւ թուանիշ. — Վարժութիւն կարի. — Շարկար, յետկար, շեղկար, խծիպ. — Կարել փոքր կտորներ եւ երախայի սպիտակեղէն:

Միջին դասընթացի Ա. սարի

Գուլպայակերպ հիւսք. — կիսաձեռնոց, ձեռնոց, բաճկոն. — Վարժութիւն կարի կտաւի վրայ. — Շարկար, յետկար, շեղկար, խծիպ, շուրջկար, թելտակ, խաչկար. — Վարժութիւն շատ պարզ ածուռներու կտաւի վրայ. — Պատրաստել փոքր կտորներ, թաշկինակ, դոզնոց:

Ուսում սպիտակ ոլոտէի, կտաւի վրայ պարզ ֆէստոններ:

Բ. ԵԱՐԻ

Գուլպայակերպ հիւսկէններու կարկատում. — Շինել ճարձանդակ, օղակ, լարձակ, կոճակ եւ կեռ կոճակ

փակցնել. — Փոթփոթել, ժանեակ կարել եւ ծալած (բլի) շինել. — Վարժութիւն ատուներու կտաւի վրայ: Կարել այլեւայլ պարզ կտորներ, ձեռքի սրբիչ, անձեռնոց, թաշկինակ, շապիկ. — Երախայի շապիկ եւ կիսաշրջազգեստ ձեւել եւ կտրել: — Վարժութիւն սպիտակ պոստէի. պարզ շապիկներ, թաշկինակներ, մարքա:

Բարձրագոյն դասընթացք Ա. սարի

Կարի եւ դարդակարի տեսակներու վարժութիւն. — Կարկտուք. կտոր ձգել, պատռածը կցել, մաշուածը լեցնել. — Ձեւ ու կար ճերմակեղէնի եւ երախայի զգեստներու. — Կարել լայնցնել (քամիզօ), կիսաշրջազգեստ, դոգնոց, շապիկ, անկողնի սաւաններ: — Վարժութիւն սպիտակ պոստէի եւ պոստէի ատուներու. պատրաստել բարձ, շապիկ եւ մարքա: — Վարժութիւն դունաւոր պոստէի. պատրաստել այլեւայլ կտորներ:

Բ. Մ Ա Ս

ՄՏԱԻՈՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԵՐԷՆ

Տարրական դասընթացք Ա. սարի

Սահուն ընթերցանութիւն, բառերու բացատրութեամբ: Բերանացի նախն սկան ծանօթութիւններ առարկային եւ անոր տեսակներուն վրայ (չնչաւոր եւ անշունչ). մտաւոր եւ նիւթական առարկաներ, առարկային թիւը, որպիսութիւնը, դորժողութիւնը. — Բառ եւ վանկ. միավանկ եւ բազմավանկ բառեր. ենթակայ եւ ստորոգեալ (բայ): Միտք եւ նախադասութիւն:

1. Բերանացի հրահանգներ

Հարցումներ եւ բացատրութիւններ՝ մանաւանդ ընթերցանութեան եւ պարտականութեանց սրբազրութեան

միջոցին: Կարգացուած բնագրին բառերուն իմաստը, գործածութիւնը, ուղղագրութիւնը: — Դժուար բառերու հեղումը: Բերանացի բացատրել կարգացուած հատուածը:

2 Յիշողութեան հրահանգներ

Փոքրիկ պարզ բանաստեղծութիւններ արտասանել՝ բացատրելէ ետքը:

3. Գրաւոր հրահանգներ

Արտագրել սերտելի հատուածը: — Ուղղագրական վարժութիւններ ընել գրատախտակի, քարետախտակի եւ տետրակի վրայ:

Բ. Տարի

Սահուն ընթերցանութիւն՝ բառերու բացատրութեամբ. — Պոսիի ռասը մասերը, գոյականները հոլովել, ածականներուն տեսակները, գերանունները, բայերուն խոնարհման առաջին տարրերը, յօդ, դերբայ, մակբայ, շաղկապ, նախադրութիւն եւ ձայնարկութիւն: — Գաղափար պարզ նախադասութեան եւ ենթակային՝ բային հետ համաձայնութեան վրայ:

1. Բերանացի հրահանգներ

Ա. տարուան նման: — Բացատրել ուսուցչին պատմած զրոյցները կամ զրոյցներուն մասերը:

2. Յիշողութեան հրահանգներ

Ա. տարուան նման:

3. Գրաւոր հրահանգներ

Այլազան ձևով քերականական վարժութիւններ: Տրուած տարրերով փոքրիկ նախադասութիւններ կազմել: Սերտելի հատուածը արտագրել:

4. Վերլուծման հրահանգներ

Վերականական լուծում (երբեմն՝ գրուոր, յաճախ բերանացի):

5. Շարաթը մէկ կամ երկու անգամ, ուսուցիչը պիտի կարդայ տղաքը հետաքրքրող հատուած մը:

Միջին դասարանացի Ա. սարի

Սահուն ընթերցանութիւն՝ բացատրութեամբ — Բառ, վանկ, գիր, — Առաջանութիւն, ուղղագրութիւն արձուութիւն (տողադարձ եւ կէսաղբութիւն). — Արմատ, բարդ եւ ածանց'ալ բառեր. կորուսման եւ փոփոխման կանոն: — Գոյական, անոր տեսակները, թիւը, բացառիկ յոքնակի, հոլովներ. յատկացուցիչ եւ յատկացեալ, ենթակայ եւ բայ, բուն լրացուցիչ եւ երկրորդական լրացուցիչ — նմանաձայն, հոմանիշ, հականիշ եւ բազմանիշ բառեր: — Յօդ եւ իր տեսակները. — Ածականին տեսակները եւ լուծումը. — Գերանունները, անոնց հոլովները եւ լուծումը:

1. Բերանացի հրահանգներ

Վայելչախօսութիւն եւ արտասանութիւն. Գերականական հարցումներ: — Ուսուցչին պատմած դրոյցները բացատրել: — Գտնարանին մէջ կարդացուած հատուածները համառօտել:

2. Յիշողութեան հրահանգներ

Առակներ, փոքրիկ բանաստեղծութիւններ, արձակ քանի մը հատուածներ արտասանել:

3. Գրաւոր հրահանգներ

Որքան կարելի է, թելադրել դասական հեղինակներու պարզ գրուածները՝ որոնք քերականական կրճատութիւններ չունենան: Տղոց ամենէն աւելի ծանօթ եւ պարզ նիւթերու վրայ շարադրութեան նախնական վարժութիւն: Ընդօրինակել սերտելի հատուածը՝ Գիւտի, նախադասութեանց շինութեան վարժութիւն:

4. Վերլուծման վարժութիւններ

Բերանացի (քիչ անգամ՝ գրաւոր) քերականական լուծում:

5. Շարաթը մէկ կամ երկու անգամ, ուսուցիչը պիտի կարգայ դասակա՛ն հեղինակներէ հատուածներ:

Բ. Տարի

Սահուն ընթերցանութիւն՝ բացատրութեամբ: — Նախադասութիւնն եւ իր տեսակները (անկախ, գլխաւոր, միջանկեալ, ստորադաս, զեղջեալ): Բայ եւ իր տեսակները, կանոնաւոր եւ անկանոն բայեր, երեք լծորդութիւններ: — Սօսքի հաստատական, ժխտական, սլատմական, հարցական, հրամայական, արգելական, տարակուսական, թէական, ըղձական ձևերը: — Դերբայ, կոչական, բացայայտիչ եւ բացայայտեալ, մակբայ, շաղկապ, նախադրութիւն եւ ձայնարկութիւն:

1. Բերանացի հրահանգներ

Ա. տարուան նման:

2. Յիշողութեան հրահանգներ

Ա. տարուան նման:

3. Գրաւոր հրահանգներ

Թելադրել դասական հեղինակներու սլարդ գրուածները: — Ուսուցչին բարձրաձայն սլատմած զրոյցները գրել: — Յատակազծով եւ առանց յատակազծի նիւթեր շարադրել: Ընտանեկան նամակադրութիւններ: Ընդօրինակել սերտելի հատուածը:

4. Վերլուծման հրահանգներ

Վերականախել եւ տրամաբանական վերլուծում (քիչ անգամ՝ գրաւոր):

5. Շարաթը մէկ կամ երկու անգամ, ուսուցիչը պիտի կարգայ դասական հեղինակներէ հատուածներ:

Բարձրագոյն դասընթացքի Ա. տարի

Ազգային հեղինակներու ծաղկաքաղ հատուածներու ընթերցումը. — Արտայայտիչ ընթերցանութիւն. — Բա-

ուերուն եւ իմաստներուն եւ անոնց գլխաւոր ձեւերուն (եթէ պատահին) բացատրութիւնները. — Հատուածին վերլուծումը (գլխաւոր եւ երկրորդական զաղափարներ, հատուածին յատակագիծը): — Ոտանաւոր հատուածներու առթիւ՝ բացատրութիւն տաղաչափութեան գլխաւոր կանոններուն. — Կենսագրական կարճ ծանօթութիւններ հատուածին հեղինակին վրայ:

Վերատեսութիւն քերականութեան. — Ուղղագրութեան դժուարութիւնները պարզել. — Արճատ, բարդ եւ անոնցեալ բառեր. — Տրոհութիւն. — Հոմանիշ, հականիշ, բաղմանիշ եւ նմանաձայն՝ բառեր: Խօսքին տասը մասերը:

1. Բերանացի հրահանգներ

Վայելչախօսութեան հրահանգները շարունակել եւ ընդլայնել:

Աշակերտը՝ իր կարգացած կամ վերլուծած գրական կամ պատմական հատուածը պէտք է բարձրաձայն բացատրէ:

2. Յիշողութեան հրահանգներ

Դասական հեղինակներու արձակ եւ ոտանաւոր ծաղկաքաղ հատուածները, տրախօսութիւնները արտասանել:

3. Գրաւոր հրահանգներ

Թշլաղրել դասական հեղինակներու հատուածները: — Արտադրել սերտելի հատուածը. — Ոտանաւորը արձակի վերածել. — Սլաղան նիւթերու վրայ (պատմութիւններ, նամակներ, պարզ նկարագրութիւններ, տղաւորութիւններ) շարագրութիւն՝ նախապատրաստութենէ ետքը (եւ մերթ աշակերտները թողլով իրենք իրենց):

4. Վերլուծման հրահանգներ

Ընթերցանութեան ատեն պատահած դժուար պարզաներու մասին քերականական վերլուծման հարցումներ:

Բերանացի տրամաբանական վերլուծում:

5. Ուսուցիչը, աշակերտներուն հետ, պիտի կարգայ գրական, պատմական, թատերական նիւթեր:

Գաղափար՝ բառերու եւ իմաստներու ձեւերուն, ոճին յատկութեանց, շարադրութեան ձեւերուն եւ գրական սեւերուն վրայ:

ՊՈՒԼԿԱՐԵՐԷՆ

Տարրական դասընթացք Բ. սարի

Հետզհետէ պարզել ձեռագիր եւ տպագիր մանր տառերը՝ իրենց յատուկ հնչումներով եւ խմբովին արտասանել տալ. — Դանօթ տառերով կարճ բառերու եւ նախադասութիւններու ընթերցում. — Դիւրըմբռնելի եւ դործածական բառերու նշանակութիւնը. — Գլխագիր եւ իր դործածութիւնը. — Կարճ եւ դիւրըմբռնելի հատուածներու ընթերցում. — Թարգմանութեան փորձեր. — Վանկ, բառ, սողադարձ, վերջակէտ եւ ստորակէտ:

1. Բերանացի հրահանգներ

Դասագրքի պատկերներու եւ ծանօթ առարկաներու վրայ խօսակցութեան վարժութիւններ:

2. Յիշողութեան հրահանգներ

Խիստ կարճ բանաստեղծութիւններ արտասանել՝ բացատրելէ էաքը:

3. Գրաւոր հրահանգներ

Ծանօթ բառերով շատ կարճ նախադասութիւններ կազմել եւ գրել գրատախտակին վրայ. — Ուղղագրական վարժութիւն. — Սերտելի հատուածը արտագրել:

Միջին դասընթացք Ա. սարի

Սահուն ընթերցանութիւն, ուշադրութիւն դարձընելով շեշտերու եւ բառերուն յատուկ արտասանութեան: — Կարգացուած հատուածը թարգմանել: — Բառերու բա-

ցատրութիւնս — Միալանկ եւ բազմալանկ բառեր, առարկայ, յատկութիւնս ցուցնող բառեր: — Նախադասութեան վրայ դադափար. նախադասութեան էական մասերը: — Գոյական, ածական, իրենց սեռը, թիւը եւ հոլովը. յօքնակիի կազմութիւնը: Ածականին համաձայնութիւնը գոյականին հետ: — Յօդ: — Անձնական դերանունին դէմքը, թիւը եւ հոլովը: — Էական եւ գործածական բայերու գլխաւոր ժամանակները.

ԾԱՆՕԹ. — Գերականութեան դասը կը կատարուի նաեւ բերանացի վարժութիւններու միջոցին, մասնաւոր ուշադրութիւն դարձնելով հոլովներու եւ համաձայնութեան կանոններուն վրայ:

1. Բերանացի նրահանգներ

Դասագրքին պատկերներուն եւ ծանօթ իրերու վրայ խօսակցութիւնս՝ նախորդ տարիէն աւելի մեծ պահանջկոտութեամբ: — Դանօթ բառերով նախադասութիւններ կազմել, հետզհետէ ընդլայնելով նախադասութեան մասերը: — Կարգացուած հատուածին վրայօք ուղղուած հարցումներուն պատասխանել:

2. Յիշողութեան հրահանգներ

Դիւրըմբռնելի բանաստեղծութիւններ արտասանել՝ բացատրելէ ետքը:

3. Գրաւոր նրահանգներ

Կարճ եւ դիւրին հատուածներու թելադրութիւնս՝ թարգմանելու պայմանաւ. — Նախապէս արուած յասակազօր մարդու եւ ծանօթ ընտանի կենդանիներու վրայ շատ փոքրիկ շարադրութիւններ ընել: — Ուղղագրութիւնս: — Սերտելի հատուածը արտադրել:

Բ. Տարի

Սահուն ընթերցանութիւնս՝ առողանութեամբ: — Թարգմանութիւնս եւ բառերու բացատրութիւնս: — Վերատեսութիւն քերականութեան: — Բայերու տեսչիներ:

րը օճ անդրադարձ դերանունին ղերը. — Բայերուն երևք լծորդութիւնները, գործածական բաղադրեալ ժամանակները, հրամայական ձևը. — Գերբայ. — Բայերուն պատմական ժամանակը — Մակբայ, նախադրութիւն, շաղկապ եւ ձայնարկութիւն. — Հարցական եւ դարմացական նշաններ. — Նախադասութեան նրկորդական մասերը. — Նախադասութեան մը մասերուն համաձայնութիւնը. — Բաղադրեալ նախադասութեան վրայ դադափար:

1. Բերանացի հրահանգներ

Կարգացուած հատուածին պարունակութիւնը ամփոփ կերպով բացատրել: Ուսուցչին նախապէս պատմած մէկ զրոյցը պատմել: — Դանօթ բառերով նախադասութիւններ կազմել հետզհետէ ընդլայնելով նախադասութեան մասերը: — Դանօթ առարկաներու եւ դէպքերու վրայ խօսակցութիւն (խօսակցութեան միջոցին մասնաւոր ուշադրութիւն՝ բայերու եղանակներուն եւ ժամանակներուն վրայ):

2. Յիշողութեան հրահանգներ

Ընտիր բանաստեղծութիւններ արտասանել՝ բացատրել եւ կարգը:

3. Գրաւոր հրահանգներ

Կարգացուած հատուածին էական մասերը գրել դասարանին մէջ: — Նախապէս տրուած յատակագծով եւ յետոյ առանց յատակագծի նկարագրական եւ պատմական փոքրիկ շարադրութիւններ ընել: — Շատ պարզ ընտանեկան նամակներ շարադրել: — Բարոյալից առակներ եւ հէքեաթներ թելագրել ու թարգմանել: — Սերտուելի հատուածը արտագրել:

4. Վերլուծման հրահանգներ

Ֆերականական եւ տրամաբանական լուծում:

Բարձրագոյն դասընթացի Ա. սարի

Հատընտիր պատճութիւններու, նկարագրութիւն-

ներու եւ առակներու արտայայտիչ ընթերցանութիւնս
 եւ ազատ թարգմանութիւնս — Բառերու բացատրութիւնս
 Վերատեսութիւն քերականութեան՝ ընդլայնմամբ:
 Նախադասութիւնս եւ անոր տեսակները: — Երկու կէտի,
 չակերտի եւ դժի զործածութիւնը: — Միջանկեալ բառ
 եւ նախադասութիւնս: Արմատ եւ ածանցեալ բառեր,
 բարդ բառեր. — Նախադաս մասնիկներ եւ անոնց նշա-
 նակութիւնը:

1. Բերանայի հրահանգներ

Կարչացուած հատուածը ազատ կերպով բացատրելու
 Ուսուցչին սլաքած զրոյցը բերանայի արտայայտելու —
 Ծանօթ նիւթերու եւ դէպքերու վրայ խօսակցութիւնս:

2. Յիշողութեան հրահանգներ

Հատընտիր ոտանաւորներ եւ արձակ կտորներ ար-
 տասանել՝ բացատրելէ ետքը:

3. Գրաւոր հրահանգներ

Կարգացուած հատուածը գրել գասարանին մէջ.
 Ուսուցչին նախապէս սլաքած զրոյցը կամ առակը
 գրաւոր կերպով ներկայացնել գասարանին մէջ՝ առակ-
 ներուէն բարոյականը ի վեր հանելով: — Հատընտիր
 հատուածներու թելադրութիւն Պուլկարերէն եւ Հայե-
 րէն, փոխաշարձ թարգմանութեամբ: — Նարադրել ասո-
 րուած դէպք մը, ընտանեկան եւ վաճառականական
 նամակներ: — Սերտելի հատուածը արտագրել:

4. ՈՃ. — Հայերէն եւ Պուլկարերէն քերականական
 եւ շարագրական կանոններուն միջև եղած տարբերու-
 թիւնը մատնանիչ ընել յարմար առթիւ:

5. Պուլկարական սլաքածութեան նշանաւոր դէպ-
 քերուն վրայ համառօտ ծանօթութիւններ:

6. Վերականական եւ տրամաբանական լուծում:

ՖՐԱՆՍԵՐԷՆ

Միջին դասերն արագի Ա. սարի

Տղադիր եւ ձեռագիր մանր տառերը ճանչցնել միանգամայն առանձին կամ խմբովին արտասանել տալ զանոնք իրենց յատուկ հնչումներով — Դանօթ տառերով կարճ բառերու եւ նախադասութեանց ընթերցումս — Կլխագիր եւ իր գործածութիւնը — Թարգմանութեան փորձեր — Անուններուն յօքնակին, արական անականը իգական ընել — Տղան շրջա շատող առարկաներու կամ պատկերներու միջոցաւ խօսակցութեան վարժութիւններս :

Կարճ եւ պարզ հատուածներ (ոտանաւոր եւ արձակ) արտասանել՝ բացատրելէ եւ թարգմանելէ ետքը :

Ընդօրինակել ուսանելիք կամ թարգմանելիք հատուածք :

Կարճ խօսքեր թելադրել :


Բ. սարի

Սահուն ընթերցանութիւն՝ բառերու բացատրութեամբ — Հայերէնէ ֆրանսերէն եւ փոխադարձ հրահանգներ — Պարզ հատուածներ հայերէնի թարգմանել, թարգմանուած հատուածին վրայ հարցումներ եւ պատասխաններ — Տղան շրջապատող առարկաներուն եւ պատկերներուն միջոցաւ խօսակցութեան վարժութիւններս — Օժանդակ եւ կանոնաւոր բայերս Անուններուն յօքնակին, արական անականը իգական ընել, որոշիչ անականներ, գերանուններ, գլխաւոր նախադասութիւններ, մակրայներ եւ շաղկապներ :

Կարճ եւ պարզ հատուածներ (արձակ եւ ոտանաւոր) արտասանել՝ բացատրելէ եւ թարգմանելէ ետքը :

Ընդօրինակել ուսանելիք կամ թարգմանելիք հատուածք :

Թելադրութիւնս — Բերանայի՝ ուսեալ հատուածը ինչպէս թելադր արտագրել :



Բարձրագոյնի դասընթացի Ա. ստի

Արձակ եւ ոտանաւոր հատընտիր հատուածներ կարգաւ, բացատրել եւ թարգմանել: Հարրական քերականութեան (խօսքի տասը մասերը, կանոնաւոր եւ անկանոն բայերը, ժամանակներու կազմութիւնը, ածանցում եւ բարդում) եւ համաձայնութեան կարեւորագոյն կանոնները:

Սօսակցութեան վարժութիւններ (Ֆրանսերէն խօսքին կազմութիւնը եւ ընթացիկ լեզուին բացատրութիւններն ու ձեւերը):

Հայերէնէ Ֆրանսերէն եւ փոխադարձ հրահանգներ:

Հատընտիր պարզ հատուածներ (բանաստեղծութիւն առակ, տրամախօսութիւն) արտասանել՝ բացատրելէ եւ թարգմանելէ ետքը: Յիշողութեամբ արտագրել արտասանելիք հատուածը:

Սերտելիք հատուածը ընդօրինակել — Թելադրել նոյնին մէկ մասը:

Փոքրիկ շարագրութիւններ (նամակ, զրոյց, բացատրուած առած):

ԳԵՐՄԱՆԵՐԷՆ

Միօրին դասընթացի Ա. ստի

Հետզհետէ ճանչցնել տպագիր եւ ձեռագիր տառերը՝ իրենց յատուկ հնչումներով եւ զանոնք խմբովին կամ առանձին արտասանել տալ — Նանօթ տառերով կարճ բառերու եւ նախադասութեանց ընթերցում եւ թարգմանութեան փորձ: Վիճակագիր եւ իր գործածութիւնը: Բառերու բերանացի վարժութիւններ: Սեւին վրայ ծանրանալ — Աշակերտներուն աչքին առջեւ դրուած պատկերներուն վրայ խօսակցութիւն:

Կարճ եւ պարզ հատուածներ (արձակ եւ ոտանաւոր) արտասանել՝ բացատրելէ եւ թարգմանելէ ետքը:

Ընդօրինակել սերտելիք եւ թարգմանելիք հատուածը Կարճ խօսքեր թելադրել:

Բ. Տարի

Սահուն ընթերցանութիւն՝ բառերու բացատրութեամբ — Գերմաներէնէ հայերէն եւ փոխադարձ հրահանգներ: — Սոսակցութեան վարժութիւններ՝ գործածական առարկաներու վրայ եւ կամ նկարուած պատկերներու միջոցաւ: — Հոլովման եւ խոնարման նախնական սկզբունք. գործածական անփոփոխ բառեր: Sein, haben, werden բայերը:

Կարճ եւ պարզ հատուածներ (արձակ եւ ոտանաւոր) արտասանել՝ բացատրելէ եւ թարգմանելէ ետքը:

Ընդօրինակել սերտելիք եւ թարգմանելիք հատուածը Թեւադրութիւնս: — Բերանացի ուսեալ հատուածը յիշողութեամբ արտագրել:

Բարձրագոյն դասընթացք Ա. տարի

Հասընտիր հատուածներ կարգաւ, բացատրել եւ թարգմանել: — Գասարանին մէջ կարգացուած հատուածներուն վրայ խօսակցութեան վարժութիւն: Գերմաներէնէ հայերէն եւ փոխադարձ հրահանգներ: Կանոնաւոր բայերը. Գոյականներն ու ածականները հոլովել: dürfen, mögen, können, müssen, sollen, wollen բայերը: Ամենէն գործածական անկանոն բայերը: Մասնիկ ունեցող բայերուն վրայ համառօտ դիտողութիւններ:

Կարճ եւ պարզ հատուածներ արտասանել (արձակ եւ ոտանաւոր)՝ բացատրելէ եւ թարգմանելէ ետքը:

Ընդօրինակել սերտելիք եւ թարգմանելիք հատուածը: — Թեւադրել նոյնին մէկ մասը:

Փոքրիկ շարագրութիւններ (նամակ, զրոյց, բացատրուած առած): — Նարագրութեան կանոններ:

ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարակալն դասընթացք Ա. 12 Բ. տարի

Խոշոր, միջակ, նուրբ գրերու վարժութիւն:

Միջիև դասընթացքի Ա. եւ Բ. սարի
Սովորական նօտր գրերու վարժութիւն:

Բարձրագոյն դասընթացքի Ա. սարի
նօտր, բոլորագիր եւ գոթիկ:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Տարրակսն դասընթացքի Ա. սարի

Ազգային պատմութեան ամենէն մեծ անձերուն եւ գլխաւոր գէմքերուն վրայ ընտանի զրոյցներ եւ խօսակցութիւններ (Հայկ, Արամ, Տիգրան Բ., Արտաշէս Բ. Տրդատ եւ Լուսաւորիչ, Մեծն Ներսէս, Վասնշատուհ, Սահակ եւ Մեսրոպ, Վարդան Մամիկոնեան, Աշոտ Ողորմած, Լեւոն Բ., Լեւոն Զ., Մշեցի Կարինէ, Դաւիթ պէկ, Իսրայէլ Օրբի, Մխիթար արքայ, Խրիմեան, Շաքէ, Մուրատ, Աւետիսեան, Պետօ, Մարտիկ, Սերոբ, Անդրանիկ):

Բ. սարի

Համառօտ ծանօթութիւններ՝ Հայկազանց, Արշակունեաց, մարզպաններու, արաբական արշաւանքին եւ Բագրատունեաց վրայ (պէտք է այլամերժօրէն ծանրանալ կարեւոր գէպքերուն վրայ)

Միջիև դասընթացքի Ա. սարի

Համառօտ ծանօթութիւններ՝ Ռուբինեանց, Թաթարաց արշաւանքին, Թիւրքերուն եւ Պարսիկներուն միջև տեղի ունեցած պատերազմներուն, Թրքահայոց, Ռուսահայոց, Լեհաստանի Հայերուն վրայ, մինչեւ մեր օրերը (պէտք է այլամերժօրէն ծանրանալ կարեւոր գէպքերու վրայ):

Բ. Տարի

Վերատեսութիւն ընդլայնմամբ՝ Հայկազանց, Արշակունեաց, մարզպաններու, արաբական արշաւանքին եւ Բագրատունեաց:

Ընդհ. պատմութիւն. — Արեւելեան հին ազգեր (Ասորեստան, Բաղդէաստան, Մարաստան, Պարսկաստան, Եգիպտոս, Փիւնիկէ, Իսրայելացիք, Յունաստան եւ Հռոմ համառօտ)

Բարձրագոյն դասընթացք Ա. աստի

Վերատեսութիւն՝ ընդլայնմամբ՝ Ռուբինեանց եւ անտէրնչութեան շրջանի. — Մանրանալ Ռուսահայոց եւ Թրքահայոց վրայ. — Յեղափոխական շարժումները:

Ընդհ. պատմութիւն. — Միջին դար, նոր դար եւ ժամանակակից դար (համառօտ):

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարրական դասընթացք Ա. աստի

Ներսիսեան աշխարհագրութիւն. — Դպրոց, փողոց, Եկեղեցի, Թաղ. — Շրջականեր, մօտակայ թաղեր կամ ճամբաներ. — Խօսակցութիւններ ծննդավայրին վրայ:

Ընդհանուր գիտելիք. — Երկրիս շորս կողմերը որոշել՝ արեւուն դիրքին նայելով: Երկրիս ձեւն ու շարժումները: Երկրագունտ: Արեւուն եւ լուսնին վրայ տարրական ծանօթութիւն: Կիշեր եւ ցորեկ, եղանակները: Մթնոլորտ եւ մթնոլորտին գլխաւոր երեւոյթներ (ամպ, անձրեւ, ձիւն, կարկուտ, հով, փոթորիկ): Ճամաքը եւ ջուրերը. — Ջուրի եւ ցամաքի այլեւայլ մասերը եւ կերպարանքները. — Աշխարհադրական եզրերու բացատրութիւն (ծով, ծոց, նաւահանգիստ, հրուանդան, կղզի թերակղզի, նեղուց, պարանոց, խութ. — Լեռ, լեռնաշղթայ, դաշտ, լեռնադաշտ, հովիտ, հրաբուխ. — Գետ, գետակ, գետաբերան, գետեզր, ջրանցք, լիճ, եւայլն) միշտ աշակերտին տեսած առարկաներէն մեկնելով եւ հանգիտական եղանակաւ:

Սեւ տախտակին վրայ գծել ծովու եւ ցամաքի մասերը եւ կերպարանքները ներկայացնող աշխարհագրական պատկերներ ու ձևերը. — Ընդօրինակութիւն քարտախտակի վրայ. — Մանօթութիւն քարտէսի:

Բ. տարի

Ընդհանուր աշխարհագրութիւն — Երկրի գլխաւոր բաժանումները. մեծ ցամաքներն եւ մեծ ուղիւնոսները եւ անոնց գլխաւոր ստորաբաժանումները

Խիստ համառօտ աշխարհագրութիւն Պուլկարիոյ եւ Հայաստանի

Սեւ տախտակին վրայ գծել ծովու եւ ցամաքի մասերը եւ կերպարանքները ներկայացնող աշխարհագրական պատկերներն ու ձևերը — Ընդօրինակութիւն քարետախտակի վրայ. Կանօթութիւն քարտէսի

Միլիոն դասը իրացի Ա. տարի

Խիստ համառօտ աշխարհագրութիւն երկրի հինգ մասերուն — Մեծ բաժանումներ — Երկրի հինգ գլխաւոր մասերը. — Իւրաքանչեւին՝ գիրքն ու սահմանները. — Մակերեւոյթն ու ծովեզերքները. (մեծ լեռնաշղթաներ, մեծ գետեր, մեծ ծովեր, կարեւորագոյն նեղուցներ, ծոցեր, եւ գլուխներ — կարեւոր յատուկ կենդանիներ, բոյսեր եւ բերքեր — կլիմաներ, ազգեր, տէրութիւններ եւ մայրաքաղաքներ Տարուական թիկերագրութիւն

Քարտասագծական վարժութիւններ սեւ տախտակի եւ քարետախտակի վրայ՝ դասի ատեն, ու տեսրակի վրայ՝ իբր պարտականութիւն — Մտաւոր ու զեւորութիւններ

Բ. տարի

Վերատեսութիւն եւ բնոյշնութ Պուլկարիոյ, Եւրոպայի եւ Ասիոյ՝ Բնական նկարագիր, սահմաններ, ծովեզերք, լեռներ, գետեր, կենդանիներ, բոյսեր եւ հանքեր — Կազմական աշխարհագրութիւն — Նահանգային բաժանումներ, մայրաքաղաքներ, գլխաւոր քաղաքներ — Ազգաբնակչութիւն, ցեղ եւ կրօնքներ — Քաղաքակրթութիւն գաղութներ, երկրագործութիւն, արուեստներ եւ զեղարուեստներ, վաճառականութիւն, ճամբաներ եւ հաղորդակցութեան միջոցներ

Յիշողութեամբ քարտէս գծելու վարժութիւններ:

Բարձրագոյն դասընթացք Ա. սարի

Հայաստանի ընդարձակ աշխարհագրութիւն եւ առանձին մանրամասնութիւններ՝ բնագրական, վարչական, պատմական եւ աւանդակա՝:

Ափրիկէ, Ամերիկա եւ Ուլկիանիա:— Բնական նկարագիր, սահմաններ, ծովեղբեր, լեռներ, գետեր, լիճեր, կենդանիներ, բոյսեր եւ հանքեր: Վաղաքական աշխարհագրութիւն: Նահանգային բաժանումներ, մայրաքաղաքներ, գլխաւոր քաղաքներ: Ազգաբնակչութիւն, ցեղ եւ կրօնքներ: Վաղաքակրթութիւն, գիրոցներ, երկրագործութիւն, արուեստներ եւ զեղարուեստներ, վաճառականութիւն, ճամբաներ եւ հաղորդակցութեան միջոցներ:

Յիշողութեամբ քարտէս գծելու վարժութիւններ:

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Տարակիսն դասընթացք Ա. սարի

Թիւերը արտասանել եւ գրել: Չորս գործողութեանց նշանները ճանչնալ:

Մտաւոր հաշիւ: 1—50 թիւերով չորս գործողութիւն: Ուսանիլ աւելման եւ բաղմապատկութեան աղիւսակները: Ամբողջին $1/2$ $1/3$ $1/4$ $1/8$ մասերը գտնել:

Գրաւոր հաշիւ: 1—100 թիւերով չորս գործողութիւն (բաժանումը կատարել միաթուանշան բաժանարարով):

Նրանօթութիւն մեթրի, ֆրանքի, լիտրի, կրամի վրայ: Ժամանակի բաժանումները:

Բ. Տարի

Մտաւոր եւ գրաւոր չորս գործողութիւն 1—1000 թիւերով:

Պատճառաբանեալ խնդիրներ՝ գրաւոր եւ բերանացի:

կոտորակ: Գաղափար տասնորդական կոտորակի վրայ: Երանթութիւններ մեթրի, լիտրի, ֆրանքի կրամի, իրենց բազմապատիկներուն եւ ստորաբազմապատիկներուն վրայ:

Միջին դասընթացք Ա. սարի

Ամբողջական թիւերով չորս գործողութիւնս — Պատճառաբանեալ խնդիրներս — Տասնորդական կոտորակներս Ստորակէտին գործածութիւնը: Տասնորդական թիւերով չորս գործողութիւնս Պատճառաբանեալ խնդիրներս Գաղափար հասարակ կոտորակներու վրայ: գրել եւ կարդալ, մեծցնել եւ պզտիկցնել հասարակ կոտորակները: Մեթրական գրութիւնս Մեթրի եւ քիլոկրամի առնչութիւնը թրքական չափերու հետ եւ անոնց վրայ գործնական խնդիրներս:

Բ. սարի

Նախնական թիւեր. — Բաժանականութիւնս, թիւ մը իր նախնական արտադրիչներուն վերածել. — Մեծագոյն հասարակ բաժանարար, փոքրագոյն հասարակ բազմապատիկ:

Հասարակ կոտորակներ. — Յատկութիւններ, պարզումներ եւ չորս գործողութիւնս Գործնական խնդիրներ. — Հասարակ կոտորակներու արժէքը գտնել, Հասարակ կոտորակները տասնորդականի վերածել եւ փոխադարձաբար:

Մեթրական գրութիւնս Միջին թիւս Միութեան կանոնս, պարզ երեքի կանոնս եւ խնդիրներս, միութեան կանոնին կիրարկումը պարզ տոկոսի եւ ղեղջի խնդիրներու մէջ: Կշիռներու, չափերու եւ գրամներու վրայ տեղեկութիւններ եւ խնդիրներս:

Բարձրագոյն դասընթացք Ա. սարի

Ամբողջական թիւերու, տասնորդական կոտորակներու վերատեսուցութիւնս եւ պատճառաբանեալ խնդիրներս:

Մեթրական գրութիւնս — Մեթրական չափերը, կշիռները եւ գրամները բաղդատել ուրիշ գործածական, տեղական եւ այլ չափերու, կշիռներու եւ գրամներու հետ, եւ անոնց վրայ խնդիրներս:

Համեմատութիւններ եւ անոնց յատկութիւնները: Պարզ եւ բաղադրուած երեքի կանոն, եւ անոր կիրարկումը տոկոսի, դեղջի, համեմատական բաշխման եւ այլ խնդիրներու մէջ: Սասնուրդի կանոն:

Տոմարակալութեան վրայ նախնական գիտելիք (սրբազ տոմար)

ԵՐԿՐԱԶԱՓՈՒԹԻՒՆ

Տարակալն դասընթացի Ա. սարի

Այլ եւ այլ տեսակ դիժեր (ուղիղ, բեկեալ, կոր, ուղղաձիգ, հորիզոնական, շեղ, զուգահեռական, ուղղահայեաց այլ եւ այլ տեսակ անկիւններ (ուղիղ, սուր եւ բութ), եւ էն տարրական կանոնաւոր ձևերը (եռանկիւն, քառակուսի, ուղղանկիւն, քառանկիւն, տարանկիւն, բոլորակ) ճանչնալ եւ գծել՝ արձակ ձեռքով գրատախտակին վրայ: Գործածութիւն երկրաչափական գործիքներու:

Բ. սարի

Երեք տարածութիւնները: Հաստատուններու (խորանարդ, զուգահեռոտն, բուրգ, գլան, կոն եւ գունա) վրայ գաղափար՝ բարձրաքանդակ օրինակներու միջոցաւ:

Աչքով միայն մեծութիւնները չափելու եւ բաղդատելու յաճախակի վարժութիւններ, ինչպէս նաեւ հեռաւորութեանց մերձաւոր գնահատումը եւ մեթրական չափով բացատրութիւն:

Միօիւն դասընթացի Ա. սարի

Երկրաչափական գործիքներով (քանակ, կարկին, ուղղանկիւնագիծ, անկիւնաչափ) վարժութիւններ սեւ առխտակի եւ թուղթի վրայ:

Մաւալ, մակերեւոյթ, գիծ, կէտ. — Այլեւայլ տեսակ

գիծեր. — Անոնց դժուժը: — Յաւելում եւ բարձում գիծե-
րու: — Չափում ուղիղ գիծերու. — Ուղղահայեացներ
գծել. — Չուգահեռականներ գծել:

Բ. սարի

Անկիւններուն տեսակները (առնթերակաց, յաւել-
ուածական, լրացուցիչ, հակադիր, համադիր), կիսող, զու-
գահեռականներով եւ հատանողով մը կազմուած ան-
կիւնները գծել, չափել եւ բաժնել:

Բազմանկիւն, շրջանակ եւ իրենց մասերը: — Գծել
եւ չափել զանոնք:

Սեւ տախտակի եւ թուղթի վրայ գծել խորանարդ,
սղոցակ, բուրդ, զլան, գունա:

Բ. սարագոյնի դասընթացքի Ա. սարի

Մակարդակ երկրաչափութեան առաջին տարրերը:
Դաւալներուն չափը:

(Մանչերու համար)

Անդաչափութեան վրայ տարրական գաղափար: —
Հարթաչափութեան վրայ գաղափար:

ԻՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Տարրականի դասընթացքի Ա. սարի

Խիստ համառօտ տեղեկութիւններ մարդկային
մարմնոյն վրայ: — Աշակերտին ամէնէն աւելի ծանօթ
կենդանիները, անոնց արտաքին տեսքը, յատկութիւնը,
բարքը: — Ամէնէն օգտակար բոյսերը, անոնց մշակումը
եւ գործածութիւնը

Ածուխ եւ գլխաւոր այրելիներ. — Գլխաւոր մետաղ-
ներ. — Դրամներ. — Ջուր (շողի, ամպ, անձրև, ձիւն, սառ,
աղբիւր, գետակ, լիճ, հոր, ջրանցք), Դոլֆու ջուր եւ ծո-
վային աղ: — Օդ, հող, փոթորիկ, օդապարիկ: —

Մնունդներ, հիւսուածներ, թղթեր, փայտեր, քարեր:
Դպրոցական պտոյաններու. ատեն, աշակերտները փոքրիկ
հաւաքածոներ պիտի կազմեն:

Բ. ՏԱՐԻ

Մարդի — Մարտոզու թիւն, արեան շրջան, շնչառութիւն, կմախք, շարժում զգայարանք:

Առողջապահութիւն — Մնունդ, օդ, կեցուածք, շարժում, մաքրութիւն:

Կենդանիներ — Սանաւորներ, թռչուններ, սողուններ, գորտազգիներ, ձուկեր, անողնայար կենդանիներ:

Բոյսեր — Օգտակար բոյսեր, երկբլթակներ եւ միաբլթակներ:

Երկրագործութիւն — Հող, մշակութիւն, բազմացումներ, մասնաւոր մշակութիւններ, անասնաբուծութիւն եւ պարտիզպանութիւն:

Հանքայիններ:

Ճարտարագործութիւններ — Մնունդի, զգեստի եւ բնակարանի ճարտարագործութիւններ. — Դպրոցականին առարկաները:

Միօիւն դասընթացք Ա. ՏԱՐԻ

Յոյժ տարրական ծանօթութիւններ բնագիտութեան (physique) վրայ — Մարմիններու վիճակները. — Կշռողութիւն. — Ջրակայութիւն. — Մթնոլորտական օդ. — Լոյս. Ջերմութիւն. — Չայն. — Ելեքտրականութիւն. — Օդերեւոյթներ:

Տարրագիտական (chimie) տեղեկութիւններ. — Այրումներ, ժանգոտումներ, խառնագործումներ, լուծումներ, թթուներ, խմորումներ, իւղեր:

Տիեզերագրութիւն — Տիեզերք, երկիր, երկրի շարժումները, երկինք:

Բնական պատմութիւն — Նախորդ դասընթացքի վերատեսութիւնը՝ ընդլայնմամբ:

Բ. ՏԱՐԻ

Վերատեսութիւն բնագիտութեան՝ ընդլայնմամբ — Մարմիններուն ընդհանուր յատկութիւնները. — Դանրութեան կեդրոն. — Պարզ մեքենաներ. — Հեղուկներուն

հաւասարակշռութիւնը եւ շարժումը. — Կազայիններուն
հաւասարակշռութիւնը եւ շարժումը. — Ձայն. — Լոյս. —
Ջերմութիւն. — Մագնիսականութիւն եւ Ելեկտրակա-
նութիւն:

Բարձրագոյն դասընթացի Ա. սարի

Համառօտ տարրագիտութիւն. — Դանօթութիւն
քիմիական երեւոյթներու վրայ՝ փոքրիկ փորձերով. —
Խառնուրդի եւ քիմիական բաղադրութեան վրայ դա-
ղափար. — Պարզ եւ բաղադրեալ մարմիններ. — Այրում
(բոյ, բնածխային թթու, թթուածին, ջրածին, արտաշնչ-
չում եւ ժանգոտում): — Ջուր, պայթուցիկ կազ (ջրածին):
Օդ, ազօթային թթու եւ ամօնիակ. — Թթուի (acide) եւ
խարխախի (base) վրայ դաղափար: Կրճարային թթու,
ծծումք, լուցիկ, ֆօսֆօր, օճառ (ճարպ, բոթաս, կալիումի
բնածխատ, սոսա նատրիումի բնածխատ, կալիումի եւ
նատրիումի խարխախները). Վառօդ (կալիումի ազօթատ
եւ բորակ): Աղ, չմարած կիր, մարած կիր եւ այլն:

Կինի, ալքոլ եւ քաղախ:

Առողջապահութիւն. — Տարրական ծանօթութիւն-
ներ առողջապահութեան վրայ:

ԳՄԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարրական դասընթացի Ա. եւ Բ. սարի

Երկրաչափական գծագրութեան վարժութիւններ:
Նախնական սկզբունք տարրական գծագրութեան. —
Երջանակներ, կանոնաւոր բազմանկիւններ եւ առ-
տըղաձեւ, վարդաձեւ զարդեր

Միջին դասընթացի Ա. եւ Բ. սարի

Արձակ ձեռնով գծագրութիւն. — Գործածական եր-
կրաչափական կոր գիծեր, ձուլաձեւ, պարուրաձեւ, եւն-
ֆոյսերէ աւնուած կոր գիծեր (ցօլուն, տերեւ, ծաղիկ):

Թեթեւօրէն կարկառուն հարթ զարդանկարներ
ներկայացնող գաճերու վրայէն ընդօրինակութիւն:

Երկրաչափական հաստատուններուն (սօլիտ) եւ գործածական պարզ առարկաներուն երկրաչափական գծապատկերը, նախ՝ միայն գիծերով, յետոյ՝ ստուերներով հեռապատկերումը:

Բարձրագոյն դասընթացի Ա. աստի

Երկրաչափական պատկերի նախնական ծանօթութիւններ եւ հեռապատկերի (բէռսբէքթիւլ) տարրեր:

Առձակ ձեւով գծագրութիւն:—Տպածոյ եւ կարկառուն օրինակներու վրայէն գծել զուտ երկրաչափական զարդեր (ձուածեւ, սրտածեւ, ատամնածեւ զարդեր, գէսեր, եւ այլն):

Փաղափար մը (սեւ դրատախտակին վրայ) ճարտարապետական ոճերու մասին:

Փծագրութիւն մարդկային գլխուն, իր մասերը, համեմատութիւնները:

Լավի սկզբունք տափակ գոյներով:

Փծագրութիւն մակերեւոյթներու երկրաչափական զարդանկարներուն (սալայատակի, տախտակամածի, պատուհաններու ապակիներուն, դռներու, ձեղուններու). — Չինական մեղանով եւ ներկով դունաղարդել այսպիսի գծագրութիւններ:

Երկրաչափական հաստատուն մարմիններու եւ պարզ առարկաներու երկրաչափական գծապատկերը, չափերով հանգերձ (փայտակերաններ, սովորական կահեր, դարբնածներ, եւ այլն):

Նիւթերուն տեսակը յայտնելու համար Լավիի գործածութիւն:—Յատակագծերու եւ քարտէսներու շաղի:

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Տարրակաւ դասընթացի Ա. աստի

Լսողութեամբ ուսանիլ պարզ երգեր:

Բ. աստի

Սաղերը (նօթ) կարդալ եւ լսողութեամբ ուսանիլ պարզ երգեր:

Միջին դասընթացի Ա. եւ Բ. աստի

Մէկ կամ երկու ձայնով երգեր, լսողութեամբ ուսանելի:

Տաղերը ձանչնալ, հնդայ (բօրթիէ), սօլի բանալին, ձայնագրութեան առաջին վարժութիւններ, ձայնին տեւողութիւնը եւ նշանակները, լսութիւն եւ նշանակներ, երկամանակ, եռամանակ եւ քառամանակ չափեր: Խաղերու ընթերցում՝ տեւողութեամբ եւ չափահարութեամբ:

Բարձրագոյն. դասընթացի Ա. աստի

Շարունակութիւն միջին դասընթացքին: Ձայնագրութեան վարժութիւններ: Սօլի եւ ֆախ բանալիները:

Ձայնարան Մաժկօն, ձայնարան Վիկօն. ձայնափոխ նշաններ: Գլխաօր Վաժկօն եւ Վիկօն ձայնարանները:

Ընթերցանութեան եւ զրուցատրութեան վարժութիւններ: — Ձայնագրեալ հատուածներուն (մէկ կամ երկու ձայնով) խմբագրութիւններ:

Գ. Մ Ա Ս

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ,

Բարոյական կրթութիւն եւ կրօնական ուսում

Ա. աստի

Ընտանեկան խօսակցութիւններ, կարգալ եւ բացատրել զրոյցներ, օրինակներ, պատուէրներ, առակներ եւ աւանդալէսներ: Սրաին միջոցաւ կրթել:

Դասարանին մէջ իսկ բարոյական կրթութեան գործնական եղանակներն ի գործ դնել:

1. Տղոց անհատական բնաւորութիւնները դիտելով՝ իւրաքանչիւրին բարի տրամազրութիւնները քաջալերելու եւ թերութիւններն ուղղելու համար:

2. Դաստիարակն ի՛ր իսկ վարժուէքին վրայ հրակելով եւ դասարանին կառավարութեան մէջ ուղիղ բարեսիրտ եւ ազնիւ ընթացք մը ունենալով՝ գործնապէս

աղոց տալու է արդարութեան, սիրոյ, անկեղծութեան եւ քաղաքալարութեան օրինակները.

3. Օգտուելով դպրոցական կեանքի դէպքերէն, այս կամ այն տղուն գովելի կամ պարսաւելի մէկ վարմունքէն, նոյնիակ իրենց բարոյական զգացման եւ դասարանին կոչում ընելու եւ դէպքը բարոյական դասի մը առիթ ընելու համար:

4. Արմատախիլ ընել տղոց մտքին մեջքէն թիւր կարծիքները (նախապաշարումներ եւ աւելորդ պաշտութիւններ, կախարհներու, դէւերու քերիներու եւայլնի նկատմամբ աղոց կազմած հաւատքը ջնջել, եւայլն.)

5. Հարմար (աշխարհաբար) զոց սորվեցնել՝ բացատրելէ ետքը:

Բ. ճարի

Շարունակութիւն Ա. տարուան

1. Օգտուելով աղոց ծանօթ արտաքին եղելութիւններէն եւ օրինակներէն՝ մտլութիւններուն եւ յոռի կիրքերուն (ծուլութիւն, շռայլութիւն, որկրամոլութիւն, ծխամոլութիւն եւն.) ախուր հետեւանքները զգացնելու եւ անոնց մասին պժգանք աղգելու, ինչպէս եւ առաքինութեանց եւ ազնիւ յատկութեանց (աշխատասիրութիւն, ճշմարտախօսութիւն, ընտանեւսիրութիւն, աղքատասիրութիւն, ընկերասիրութիւն, եւն.) նկատմամբ համակրութիւն եւ փափաք ներշնչելու համար:

Նոյնիակ աղքատի, կարօտեալի եւ հիւանդի գործնապէս օգնելու առիթներ ներկայացնելով աղոց եւ յոյց տալով անոնց բարեգործական հա տատութիւնները՝ անոնց մէջ գթութեան եւ անձնուիրութեան զգացումները մշակել:

3. Բնութեան մեծ եւ գեղեցիկ տեսարաններուն առջիւ տանել տղաքը՝ հիացումսին գրգռելու եւ կրօնական զգացումը մշակելու համար:

4. Յիսուս եւ Աբգար. — Աբգար եւ Թաղէոս. — Սանդուխտ կոյս. — Տրդատ եւ Գրիգոր Լուսաւորիչ. — Հոփսիմեան կոյսեր:

Միջին դասընթացի

Ոստակցութիւններ, ընթերցումներ՝ բացատրութեամբ. գործնական հրահանգներ — նախորդ դասընթացքը ընդլայնել և գասերն և ընթերցումները այնպէս մը շղթայել որ յետագայ յայտադիրը կէտ առ կէտ գործադրուի, երկու տարուան մէջ:

Ա. Տարի

Տղան ընտանիքին մէջ. — 1. Իր նողաց և մեծ ծնողաց նկատմամբ սուրսակախութիւններ, Հնազանդութիւն, յարգանք, սէր, երախտադիտութիւն — Օգնել ծընողաց իրենց աշխատութեան մէջ, մխիթարել զանոնք իրենց հիւանդութեան մէջ. խնամել զանոնք իրենց ծերութեան օրերուն:

2. Եղբայրներուն և քոյրերուն սուրսակախութիւնները — Փոխադարձ սէր, մեծերուն կողմէ փոքրերուն պաշտպանութիւն և բարի օրինակ:

3. Պարսակախութիւններ ծառաներուն նկատմամբ: Ինչպէս պարտութեամբ վարուիլ անոնց հետ, բարի բլլալ անոնց նկատմամբ:

4. Տղան դպրոցին մէջ: Յարատելութիւն, հնազանդութիւն, աշխատութիւն, կանոնապահութիւն, բարեկրթութիւն — Իր աստիարակին նկատմամբ պարտականութիւններ — Ընկերին նկատմամբ պարտականութիւններ:

Հայրենիք — Հայաստան, իր մեծութիւններն ու դժբաղդութիւնները — Հայրենիքի և ընկերութեան նկատմամբ պարտականութիւններ:

6. Պարսակախութիւններ անձին նկատմամբ — Մարմին, մաքրութիւն, ժուժկալութիւն, բարեխառնութիւն — Աւթըլամոլութեան վասնդները, իմացականութեան, կամքին տկարացումը և առողջութեան խանգարումը — Մարմնամարզ:

7. Արտաքին բարիքները — Խնայողութիւն, պարտքէ խուսափել, խաղամոլութեան ազնտալի հետեւանքները,

Կրամի եւ շահու մոլութենէն զդուշանալ, շոյլութիւն, ազահութիւնս Աշխատութիւն (ժամանակը չլորսընցնել, աշխատութիւնը պարտաւորիչ է ամէն մարդու համար, ձեռական աշխատութեան ազնուութիւնը) :

Բ. ՏՄԵՐԻ

Հոգիւն. — Ծշմարտախօսութիւն եւ անկեղծութիւն. երբէք չստեղ. — Անձնական արժանապատուութիւն. յարգել իր անձը. — Համեստութիւն. ճանչնալ իր թերութիւնները, զգուշանալ հպարտութենէ, սնապաշտութենէ եւ պչրասիրութենէ : — Տգիտութենէ եւ ծուլութենէ ամչնալ. — Վաճառներու եւ դժբախտութիւններու մէջ արիութիւն. Համբերութիւն. Նախաձեռնութեան ոգի. Բարկութեան վտանգները :

Քաղցրութեամբ վարուիլ կենդանիներուն հետ. պարապ տեղը չխոշտանգել զանոնք :

Պարտականութիւններ ուրիշ մարդոց նկատմամբ. — Արդարասիրութիւն եւ գութ (մի՛ ընէք ուրիշին ինչ որ չէք ուղեր որ ուրիշը ձեզ ընէ. — Ըրէ՛ք ուրիշին ինչ որ կուզէք որ ուրիշը ձեզ ընէ) : — Չվնասել ուրիշին կեանքին, անձին, ինչքի՛, համբաւին : — Բարութիւն, եղբայրութիւն : — Յարգել ուրիշին հաւատքը (ներողութեան ոգի) :

Կրօնօրութիւն. — Ամբողջ միջին դասընթացքին մէջ, դաստիարակը մեկնակէտ պիտի ընտրէ խղճին գոյութիւնը, բարոյական օրէնքը եւ պարտականութիւնը : Պիտի կոչում ընէ տղոց բարոյական-բնական զգացմանց, պարտականութեան եւ պատասխանատուութեան զաղափարին, առանց զանոնք տեսականապէս ապացուցանել ջանալու :

Ասուծոյ նկատմամբ պարսկանութիւններ : — Մեր սէրն յայտնել Անոր ո՛չ միայն արտաքին պաշտամունքով, այլ եւ, մանաւանդ, առաքի՛նի եւ աստուածահաճոյ գործերով :

Քրիստոնէութեան Հայոց մէջ հաստատութեան պատմութիւնը: — Հա եկեղեցին եւ իր սուրբերը: — Աւետարանին պատուէրները: — Քրիստոնեայ եկեղեցւոյն գլխաւոր տօներուն բացատրութիւնը:

Բարձրագոյն դասընթացքի Ա. սարի

Խօսակցութիւններ, ընթերցումներ, գործնական հրահանգներ, նախորդ երկու դասընթացքներուն պէս Ասիէ զատ բարձրագոյն դասընթացքը պիտի պարունակէ դասերու կանոնաւոր շարքի մը մէջ, բարոյական ընդհանուր սկզբունքներուն եւ մեր այլ եւ այլ կարգի եւ մասնաւորապէս ընկերային պարտականութեանց ուսման տարրական ընթացք մը, ըստ հետեւեալ յորագրին:

1. Ընթացքի

Ծնողաց եւ զաւակներուն պարտականութիւնները: Տէրերուն եւ ծառաներուն փոխադարձ պարտքը. — Ընտանեկան ոգի:

2. Ընկերութիւն

Մարդկային ընկերութեան անհրաժեշտութիւնն ու բարիքները: Համերաշխութիւն, մարդկային եզրայրութիւն: Ալքոլականութիւնը կամաց կամաց կը ջնջէ այս զգացումները՝ կամքի եւ անձնական արժանապատուութեան զսպանակը խորտակելով:

Արդարութեան պարտականութիւններ, յարգանք մարդկային կեանքին եւ ազատութեան, յարգանք սեպհականութեան, յարգանք պարտոյ խօսքի, յարգանք ուրիշին համբաւին եւ նշանակին: Ուղղամտութիւն, փափկանկատութիւն: Յարգանք ուրիշներուն կարծիքներուն եւ հաւատքին:

Գթութեան եւ եղբայրութեան պարտականութիւններ: Սիրոյ զանազան աստիճանները՝ բարեացակամութիւն, հաճոյակատարութիւն, երախտագիտութիւն, ներողութիւն, եւն: Անձնութիւն (սիրոյ զերագոյն

ձեւը). ցոյց տալ թէ անձնութիւնը կարելի է որ
տեղ դանէ մարդու ամենօրեայ կեանքին մէջ:

3. Հայրենիք


Թէ ի՞նչ պարտի մարդս իր հայրենիքին (օրէնքնե-
րուն հնազանդիլ, զինւորական ծառայութիւն քնել,
անձնութիւն, հաւատարմութիւն գրոշակին): — Հարկ
(նոյապա հանրային օգտին եւ զարգացման). — Քուէ
(անձնուէր մասնակցութիւններ եւ յանձնառութիւններ
վարչական օրաշտօններու եւ հանրօգուծ ծառայութեանց):
Այս պարտքերուն համապատասխանող իրաւունքներ
(անհատական ազատութիւն, խղճի ազատութիւն, աշ-
խատութեան ազատութիւն, ընկերակցութեան ազատու-
թիւն): Ամէն մարդու կեանքին եւ ինչքին ապահովու-
թեան երաշխաւ որութիւնը Ազգային գերիշխանութիւն:
Բացառել սա սամկալարական նշանաբանը՝ Ազատու-
րիւն, Հաւատարմութիւն, Եղբայրութիւն.

4. Եկեղեցական պատմութիւն

Եկեղեցւոյ առաջին երեք ժողովներ. — Քրիստոնէա-
կան եկեղեցւոյ ամենէն նշանաւոր հայերը. — Հայ եկե-
ղեցւոյ մեծանուն Հայրապետները եւ Թարգմանիչները:
Քրիստոնէութեան գլխաւոր բաժանումները. — Ըն-
թերցում եւ բացատրութիւն Աւետարանի (Լեւոն քա-
րողը, Առակները, Յիսուսի վերջին շարժը):



НАРОДНА БИБЛИОТЕКА



Պատժ. Ուսուցչական մարմինը, ըստ յանձնարարու-
թեան Հոգաբարձութեանս, պատրաստած է սոյն ծրագիրը՝
զոր վաւերացնելով, կ'արտօնէ անոր գործադրութիւնը
տեղւոյս Ազգ. երկսեռ վարժարանաց մէջ, յառաջիկայ
1904—1905 տարեշրջանէն սկսեալ:

28 Օգոստ. 1904

Ի դիմաց Հոգաբարձութեան

ԲՈՒՄՃՈՒՔ

Վ. Ասեւնադպրի

Ասեւնապետ

Լ. ԳԻՒՐՏԵԱՆ

ԵՐ. ՅԱԿՈՒԵԱՆ

Пров. 1957г.

[3652]

A $\frac{11}{61741}$

Գ Ի Ն 6 Չ Ս Ս Ն Դ Ի Մ

ԳԼԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220061741